

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. մայիսի 20-ի

նիստի /արձանագրություն N 13/

1. ԵԹԿՊԻ-ի 2018-2023թթ. ռազմավարական ծրագիրը մշակելու նպատակով հաստատել ԵԹԿՊԻ-ի ռազմավարության պլանավորման հանձնաժողովի ներքոհիշյալ կազմը՝ նախագահ՝ - Դ.Մուրադյան
անդամներ՝ - Ն. Սարգսյան- Ուսումնագիտական աշխ. գծով պրոռեկտոր,
 - Ղ. Ավագյան-Անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական աշխ. գծով պրոռեկտոր,
 - Վ. Եղիազարյան- Ֆինանսատնտեսական աշխ. գծով պրոռեկտոր,
 - Գ. Հովհաննիսյան- Գիտքարտուղար
 - Հ. Իսրայելյան - Որակի ապահովման կենտրոնի ղեկավար,
 - Է. Հեքեքյան- Թատրոնի ֆակուլտետի ղեկան,
 - Ա. Երզնիկյան- Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ղեկան,
 - Ա. Հարությունյան- Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի ղեկան,
 - Ա. Եղիազարյան- Հեռակա ֆակուլտետի ղեկան,
 - Զ. Սահակյան- Միջազգային հարաբերությունների բաժնի պետ,
 - Է. Մանասարյան- Ռեկտորի իրավախորհրդատու,
 - Հ. Նալբանդյան- Գլխավոր հաշվապահ,
 - Վ. Մարգարյան- Ուսումնական գործընթացի համակարգման բաժնի ղեկավար,
 - Է. Բարսեղյան- PR պատասխանատու,
 - Ա. Սարգսյան- Ռեկտորի օգնական՝ երիտասարդության հետ տարվող աշխատանքների գծով,
 - Հ. Հարությունյան- Ուսանողական խորհրդի նախագահ:

2. Ուսանողների ստացած մրցանակների մշտական ցուցադրություն կազմակերպելու նպատակով հանձնարարել տնտեսական մասին պատրաստելու հատուկ ցուցատախտակ:

3. Ինստիտուտում ուսուցանվող մասնագիտությունները գովազդելու նպատակով հունիս ամսին կազմակերպել մամուլի ասուլիս:

4. Հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը՝ բավարարել ինստիտուտի նախորդ տարվա ներքոհիշյալ շրջանավարտների անվանափոխության առնչությամբ հղված դիմումները և թույլատրել՝

4.1 Դերասանական արվեստ մասնագիտության 2016թ. մագիստրատուրայի շրջանավարտ **Գոհար Վարդանի Եղիկյանին** հատկացնել նույն մասնագիտության բակալավրի և մագիստրոսի որակավորման դիպլոմներ **Գաբրիելա Վարդանի Եղիկյան** անուն ազգանունով:

Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների դիպլոմներ հատկացնելու համար Գ. Եղիկյանից գանձել 10.000 (տաս հազար) դրամ,

4.2 Դերասանական արվեստ մասնագիտության բակալավրիատի 2012թ. շրջանավարտ **Միլվա Կարենի Իգիթյանին** հատկացնել նույն մասնագիտության բակալավրի որակավորման դիպլոմ **Միլվի Կարենի Իգիթյան** անուն ազգանունով:

Բակալավրի կրթական աստիճանի դիպլոմը հատկացնելու համար Մ. Իգիթյանից գանձել 5.000 (հինգ հազար) դրամ,

4.3 Պարարվեստի ռեժիսուրա մասնագիտության բակալավրիատի 2015թ. շրջանավարտ **Մերի Վահանի Գասպարյանին** հատկացնել նույն մասնագիտության բակալավրի որակավորման դիպլոմ **Մերի Վահանի Մելիքյան** անուն ազգանունով:

Բակալավրի կրթական աստիճանի դիպլոմը հատկացնելու համար Մ. Մելիքյանից գանձել 5.000 (հինգ հազար) դրամ:

5. Ինստիտուտի կայքի վերագործարկման աշխատանքները պատշաճ մակարդակով կատարելու համար կայքի պատասխանատու Ռուզաննա Առաքելյանին խրախուսել դրամական պարգևով՝ 100.000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով:

6. Հանձնարարել Է. Հեքեքյանին ավարտական ներկայացումների համար վոկալի լրացուցիչ ժամեր հատկացնելու հարցը քննարկել ֆակուլտետում և ներկայացնել առաջարկներ: